ընդհանուր առմամբ, ընտիր կերպով կատարած է իր աշխատութիւնը, որուն համար շնորհապարտ ենք։

Ե. ՓԻՒՐՏԵԱՆ

* * *

## ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

### Գրեց

### ԳԱՌՆԻԿ ՍՏԵՓԱՆԵԱՆ

Հատոր Ա, Երեւան, 1973, էջ 382։

1974 թուի սկիզբներին Երեւանում «Հայաստան» Հրատարակչութեան կողմից լոյս տեսաւ Գառնիկ Ստեփանեանի «Կենսագրական Բառարան»ի Ա. հատորը։

Ի՜նչքան հաճելի ու քաջալեր է, որ մի ուսուցիչ, բանասէր, ուսումնասէր ու հետաքրքրուող անձ, իր ուզած տեղեկութիւնը, իր ուզած բոպէին կարողանայ գտնել ու օգտուել նրանից։

Այսպիսի մի հաճոյք մեզ տալիս է «Կենսագրական Բառարան»ը, որի գոյութեան պահանջը վաղուց ի վեր զգացուում էր մեր մօտ։ Թէեւ անցեալում այս ուղղութեամբ աշխատանքներ են տարուել եւ հրապարակ հանուել նման հրատարակութիւններ, բայց դժբախտաբար մնացել էին թերի վիճակում, տպագրուելով միայն Ա, Ա–Ը եւ Ա–Ն տառերով անունները։

Անձնանուններից բացի, մենք ունեցել ենք նաեւ հանրագիտարանի նման այլ աշխատութիւններ, որոնց մէջ եղել են աշխարհագրական ու հայկական շէն ու աւանների անունները, ինչպէս Հ. Էփրիկեանի «Բնաշխարհիկ Բառարան»ը, որը նոյնպէս մնացել է թերի, տպագրուելով միայն Ա–Կ տառերը։

Անուն–կենսագրութիւնների մինչեւ այժմ հրատարակուած լաւագոյն բառարանը, թէեւ ոչ այժմէական անուններով, պէտք է համարել Հրաչեայ Աճառեանի հինգ հատորնոց «Անձնանունների բառարան»ը, որի մասին «Կենսագրական բառարան»ի հեղինակը, ըստ երեւոյթին մոռացել է յիշելու իր Նախաբանի խօսքին մէջ։

Անցեալում տողերիս գրողն եւս ձեռնարկեց նման մի համառօտ բառարանի կազմութեան, բայց տեղեկանալով որ Հայաստանում արդէն տարուում է նման աշխատանք, դադարեցուց այն։

Ինչքան տեղեակ ենք, ուրիշներ եւս նման աշխատանքներ տարել են, անձնանունների հետ հաւաքելով նաեւ հայկական տեղանուններ, որոնք նոյնպէս մինչեւ այժմ լոյս աշխարհ չեն եկեր։

Գառնիկ Ստեփանեանի «Կենսագրական Բառարան»ը բաղկացած է երեք հատորից, որի Ա. հատորն է լոյս տեսել եւ իր մէջ ընդգրկում է Ա–Թ. տառերը։ Երկսիւնակ է եւ ունի 382 էջ, միջին մեծութեամբ։

Բառարանում տրուած են հայ գրողմտաւորականների, արուեստագէտների, աղդային չափանիշով հայ քաղաքական եւ այլ դէմքերի, ինչպէս եւ օտարազգի հայագէտների, օտար լեզուով գրող հայերի ու հայ ծագում ունեցող անձերի անունները։

Բառարանը կարեւոր մի աշխատութիւն է, որն եկաւ լեցնելու անհրաժեշտ այդ բացը, օգտակար շատ շատերին, նոյնիսկ հենց գրքում տեղ գտած եւ այժմ կեանք ունեցող անձերին, հայ հեղինակներին, մտաւորականներին, պատմաբաններին, բանասէրներին եւ այլոց, որոնք միշտ զգում են դրանց կարիքը եւ շատ անգամ դիմում այս ու այն աղբիւրին ու անօգուտ փնտռտուք կատարում։

Բառարանը իր գեղեցիկ օգտակարութեան մէջ, թւում է, աւելին կարող էր ծառայել, եթէ տուեալ անձի կենսագրութեան մէջ, նման Աճառեանի «Անձնանունների բառարան»ի, յիշուէին մէկ երկու կարեւոր աղբիւրներ, նոյն անձի աւելի ընդարձակ կենսագրութեան մասին, իսկ հոգեւորականների մասին նաեւ նրանց ունեցած աստիճանն ու պաշտօնը։

Բնականաբար, նման մեծ տարողութեամբ աշխատութիւնների մէջ, կարող են լինել այլ բացեր ու աննշան մոռացումներ ու բացթողումներ, որոնք մասամբ առաջ են գալիս աղբիւրների չգոյութեան պատճառով, յատկապէս Հայաստանում, ուր վերջին կէս դարուայ արտասահմանեան հայ մամուլն ու այլ հրատարակութիւնները չեն ստացուել ամբողջութեամբ։

Ստորեւ տալիս ենք մեզ ծանօթ Ա–Գ տառերի ներքեւ մի քանի անձերի մասին եղած մոռացումներն ու բացթողումները, որպէսզի ապագայում, ըստ անհրաժեշտութեան, սրբագրուեն ու լրացուեն յաջորդ հատորներում.

— Արգար Տիգրանեան. (էջ 9) մեռել է 1950 թուին, նրա «Նոր Ջուղայի անդիր բանահիւսութիւնը» մէկ հատորով տպագրուել է յետ մահու՝ 1966 թուին։

— Ալլահվերդի աշուղ. (էջ 54) ծնուել է ոչ թէ Զարմահալ գիւղում, այլ Զարմահալ գաւառի Լիւսեան գիւղում, 1820 թուին։

— Աղանեան Վահան. (էջ 69) եղել է քահանայ, մեռել է 1942 թուին, յիշուած աշխատութիւններից բացի, նա գրել է նաեւ «Ս. Մինաս եւ Ս. Վարվառէ» գրքոյկը, եկեղեցիների մասին ունեցած փոքր աշխատութեան խորագիրն է՝ «Նոր Ջուղայի եկեղեցի ուխտատեղիներ»։

— Ամիր Օղլի (աշուղ). (էջ 85) ծնուել է ոչ թէ Բուրբուրի գիւղում, այլ՝ գաւառում։

— Առաքել Բաղիշեցի. (էջ 105) 1971 թուին Երեւանում, Արշալոյս Ղազինեանի ուսումնասիրութեամբ լոյս են տեսել նրա երգերը. «Առաքել Բաղիշեցի» խորագրով։

— Գառոնէ Արամ. (էջ 227) մեռել է 1941 Օգ. 28ին, իսկ «Լուսաբեր»ը հրատարակուել է 1949–1971 թուերին։

— Գէորգ Զուղայեցի (էջ 241) կուսակրօն հոգեւորական, ծնուել է 1693 թուին եւ վախճանուել 1768 թ. Հոկտ. 28ին, Ջուղայի առաջնորդ է եղել 1754 թուից մինչեւ մահը։

— Գուրէյեան Նազար (էջ 252) ծնուել է Թաւրիզում 1843 թուին, եւ մեռել 1901 թուին։ Իր «Պարսկաստանի Հայերը» աշխատութիւնը տպագրուել է Թեհրանում 1968 թուին, Տաճատ Պօղոսեանի առաջաբանով։

Այս, ինչպէս եւ յիշատակուած անձերի շարքը կարելի է շատ երկարել։ Եթէ անհրաժեշտ լինի թուել հայ բոլոր արուեստագէտների եւ հոգեւոր ու աշխարհիկ անձերի անունները, որոնք մէկ–երկու գրքեր են հրատարակել, ապա դրանց թիւը շատ պիտի բարձրանայ։

Այսպիսի աշխատութիւնը պահանջում է երկար ժամանակ, անսպառ եռանդ, անխոնջ պրպտումներ եւ աննահանջ ու հաստատուն կամք։

«Կենսագրական Բառարան»ը մի կարեւոր աշխատութիւն է, որ անհրաժեշտ է ամէն մէկ գրագէտի ու հայ ընտանիքի համար։ Ցանկանք որ եղած բացթողումներն ու մոռացումները, լրացուեն յաջորդ հատորներում։

Լ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ



© National Library of Armenia